Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Ապրանքների ներմուծումը Հայաստան առնվազն 1.55 անգամ գերազանցում է արտահանման ընդհանուր ծավալները [1] : Արտահանման և ներմուծման այս հարաբերակցությունը չի կարող բացասաբար չազդել ներպետական տնտեսության վրա [2] : Փորձելով շտկել նշված հարաբերակցությունը հօգուտ արտահանման՝ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (*այսուհետ՝ Օրենք*) 89-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ ***Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է 0%:*** Սակայն տնտեսվարողներն արտահանելիս վճարում են որոշ այլ վճարներ, որոնց հանրագումարը զգալի թիվ է կազմում և խոչընդոտում հատկապես փոքր խմբաքանակներով (հիմնականում՝ պատվերով) ապրանքների արտահանմանը:

Մասնավորապես, արտահանողը ներկայացնում է հայտարարագիր արտահանվող ապրանքի համար, որի լրացման համար վճարվում է մաքսային ներկայացուցչի վճար՝ մոտ 10.000-15.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև մաքսավճար՝ 5.500 ՀՀ դրամի չափով, որը բաղկացած է Օրենքի 97-րդ հոդվածով սահմանված մաքսավճարներից՝

– մաքսային ձևակերպումների համար՝ 3.500 ՀՀ դրամ,

– ապրանքների զննման և հաշվառման համար՝ մինչև 1 տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1.000 ՀՀ դրամ, որը գանձվում է միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված յուրաքանչյուր ապրանքատեսակի համար,

---

[1] Import March 2016 - $232.7 mln http://armstat.am/am/?nid=126&id=10004
Export March 2016 - $149.8 mln http://armstat.am/am/?nid=126&id=10003

[2] 2013-ից ի վեր 2015-ին գրանցել ենք արտահանման ծավալի ամենացածր ցուցանիշները: Վերջին 4 տարիների տվյալները վկայում են, որ արտահանման ծավալի ցուցանիշները տատանողական են և տարեցտարի նվազման միտումներ են գրանցում: 2014-ին Ռուսաստանի հանդեպ ԵՄ-ն կիրառեց պատժամիջոցներ, դրվեցին սահանափակումներ, ինչը պետք է խրախուսեր հայաստանյան արտադրանքի մուտքը ռուսական շուկա, սակայն դա տեղի չունեցավ. 2012-ից ի վեր՝ այս տարի գրանցել ենք արտահանման ծավալի ամենացածր ցուցանիշը, իսկ 2013-ի համեմատ՝ ունեցել 100 մլն դոլարի նվազում: http://hetq.am/arm/news/67689/inch-pokhvec-artahanman-tsavalum-etm-in-hayastani-andamakcutyunic-heto.html

– մաքսային մարմնի կողմից տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի (ձևաթղթի) տրամադրման համար՝ 1.000 ՀՀ դրամ մաքսավճար:

Այս բոլոր ծախսերը տնտեսվարողի կողմից ներառվում են արտահանվող ապրանքի գնի մեջ՝ թանկացնելով դրա արժեքը և հետևաբար փոքրացնում ապրանքի մրցունակությունը շուկայում:

Այսպես, էլեկտրոնային առևտրով և արտասահմանյան համալսարաններից ու գիտական այլ հաստատություններից Հայաստանին վերաբերող գրականության մատակարարման պատվերներով աշխատող տնտեսվարողի արտահանած գրքերի մեծ մասի արժեքը չի գերազանցում 3.000-4.000 ՀՀ դրամը՝ յուրաքանչյուրի համար: Գրքերը 1-2 օրինակով տարբեր ժամանակահատվածներում մատակարարելիս նշված տնտեսվարողը ստիպված է վճարել նվազագույնը 5.500 ՀՀ դրամ մաքսավճար և մաքսային ներկայացուցչի վճար: Արդյունքում տնտեսվարողը 4.000 ՀՀ դրամ արժողությամբ ապրանք մատակարարելու համար պարտավոր է կատարել նվազագույնը 15.500-20.500 ՀՀ դրամի չափով լրացուցիչ վճարներ: Միևնույն խնդիրն ունեն նաև էլեկտրոնային առևտրով զբաղվող այլ տնտեսվարողները, օրինակ՝ ձեռագործ հուշանվերներ վաճառողները, որոնց արժեքը տատանվում է 1.000-5.000 ՀՀ դրամի շրջանակներում և այլն:

Միաժամանակ, առաջարկվում է նաև ժամանակային սահմանափակում դնել, որպեսզի մեծ քանակությամբ ապրանքը մանր խմբաքանակներով արտահանելով՝ հոդվածով տրվող արտոնությունը չչարաշահվի:

Նախագծով առաջարկվող լրացումը հնարավորություն կտա կրճատելու փոքր քանակությամբ ոչ թանկարժեք ապրանքների արտահանման համար գանձվող անհամաչափ մաքսավճարները՝ զգալիորեն իջեցնելով նաև այդ ապրանքների գինն ու հետևաբար բարձրացնել դրանց մրցունակությունը միջազգային շուկայում: